



## Վահան Թորոլենց

### Երգ մը քան անմահության իմաստասիրությունը

Գանգեր և հինավուրց ճակատներ... բոլորն ալ ոսկրուտ և այլանդակ, բոլորն ալ խանձած և ծռած, ճնոթկված ժամանակի հսկա անիվին տակ:

Բոլորն ալ մաշած են տիեզերքի արագության հետ և խորհուրդը հոն թողուցած է իր խոր ակոսները: Շատերը ճեղքված և վառած, ինչպես կայծակեն վիրավորված բունը ծառին, ուրկե դուրս կարծես ճառագայթներու խուրձեր ելած են և կորսված հողին մեջ:

Անոնք դարերու նվերներն են մեզի հասած:

Գանգե՛ր... Պատմության շուշաններն են անոնք՝ պահված անարև հողին տակ ապագա բոլոր սերունդներուն ի նվեր:

Ահավասիկ՝ վարդի մեկ քանի թերթեր, որոնք քարացած են անոնց հետ: Ոչ բույր ունին և ոչ թարմություն . ժամամանակը ամեն ինչ խլած է անոնցմե. առտվան ցողը անոր վրա չկենար, և ոչ ալ սոխակը իր երգերուն մեկ թրթռումը պիտի նվիրեր անոնց համար:

Թերևս անոնք բեկորներն են այս գանձերու մեկի պսակին՝ արցունքը աչքերուն մեջ լեցված կույսի մը կողմեն դրված իր սիրահարի ճակատին վրա: Թերևս ոճրագործ մըն է ան, որուն վրա պատահաբար հովը քշեր բերեր է այդ անմեղ թերթերը, թերևս մայրը իր գավակին համար, թերևս որդին իր հորը, կամ ընկեր մը իր գաղափարի ընկերոջը համար դրած ըլլան:

Անոնք թեև արշալույսին բույրը չունին, բայց ունին անմահության և դարերու  
օծությունը:

Ինչ որ ալ ըլլա՝ ես ծունկի կուգամ այս վարդի բեկորներուն առջև, առնելով  
ուներուս վրա ծանրությունը դարերու խորհրդավորության, որում կզգամ  
ժամանակի սարսուռը:

Երբ վարդերը չեն մեռնիր, երբ վարդերը կրնան բյուրավոր արշալույսներ  
ողջունել, որոնք սահմանված էին ուղևորի մը ոտքերուն տակ ճգնվելու, այն ուժը,  
որ կզգամ կենդանի խորությանս մեջ, երբեք չէ կարող մեռնիլ: